

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕԶՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՐ

Հայ Եկեղեցու պատմության մոր շրջանի մշամավոր դեմքերից է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, ինքնատիպ մի անձնավորություն, բարձրաստիճան հոգևորական, որը 12 տարի անընդմեջ եղել է Կ. Պոլսի հայոց Պատրիարք համիդյան բռնատիրության պայմաններում, իր իսկ արտահայտությամբ եղել «գազաճաղատա և լարախաղաց» և միևնույն ժամանակ զբաղվել գիտական գործունեությամբ՝ իրենից հետո թողնելով պատկառելի գիտա-գրական ժառանգություն, որում առանձնանում է հատկապես եռահատոր «Ազգապատում» կողողալիմ աշխատությունը, որը ունի հետևյալ խորագիրը. «Հայ Ուղղափառ Եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած»։ Նշված «յարակից ազգային պարագաները» հայ ժողովրդի պատմությունն է քրիստոնեություն ընդունելու ժամանակից, գրված մի անհատի կողմից, որը սակայն պատիվ կրեբեր և մի ունի գիտական հաստատության:

Աշխատությունն սկսվում է քրիստոնեության առաջին դարով և Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների՝ Հայաստանում քարոզության ներկայացմամբ: Ա հատորի «Նախագիտելիք» հատվածում հեղինակը գրում է, որ իր «աշխատութեան մէջ պէտք չէ փնտռել ոչ քննադատական հետազոտութիւններ, ոչ գիտական ուսումնասիրութիւններ և ոչ կազմատրեալ բանավէճեր¹: Սակայն եղելություններն ու իրադարձությունները շարադրելու ընթացքում Օրմանյանն ի հայտ է բերում վերլուծող և քննախույզ գիտնականի մոտեցում իր շարադրած մյուսի մկատմամբ: Հայոց Եկեղեցու պատմությունը մա շարադրում է՝ մեծապես օգտվելով և հենվելով հայ պատմիչների աշխատությունների վրա: Փաստերը վերցնելով տվյալ ժամանակահատվածի պատմիչների գործերից, շարադրանքի ընթացքում Օրմանյանը ցուցաբերում է հմուտ գիտնականի մոտեցում, երբեմն՝ համաձայնվելով, հաճախ՝ ժխտելով ու տարակուսելով, ապա և վերլուծելով տարբեր պատմիչների հայտնած տեղեկությունները:

Օրմանյան հետազոտողի այս մոտեցումն է մեզ հնարավորություն տալիս տարբեր հարցերի վերլուծության ընթացքում անդրադառնալ հոգևորական-գիտնականի տեսակետների քննությանը: Նման մի համեստ մպատակ է հետապնդում այս հոդվածը Հովհաննես Օձնեցի Կաթողիկոսին տրված մրա գնահատականների մասին: «Ազգապատում»-ի Օձնեցուն մկիրված բաժինը կազմում է 45 էջ, որտեղ Օրմանյանը կատարում է 129 հղում 20 հեղինակներից՝ միջնադարյան պատմիչներից և մոր շրջանի պատմաբաններից: Գնահատելով Օձնեցուն որպես «Հայրապետական Աթոռի փառքերէն մէկ», որն իր վարչական և գիտական հմտության շնորհիվ ստացել է «իմաստասեր» բնորոշումը, Օր-

¹ Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, Երևան, 2001 թ., էջ 1:

մանյանը մշտն է. «Այդ իմաստասիրական բառերը կը ցուցանեն, թե Յովհաննէս հելլենական ուսում ալ առած և յունական ուսումնաբանի մէջ կրթուած պիտի ըլլա, որչափ ալ ինքն այդ մասին յիշատակութիւն չըներ իր վրա խօսած ատեն»²: Այդ հանգամանքը սակայն դեր չի խաղացել, և կաթողիկոսը թե՛ կրոնական և թե՛ քաղաքական առումով կոյ չի գնացել հունականին և միշտ «յոյներէ հետի մնալու ուղղութիւնը պահեց»:

Պատմաբան Օրմանյանի վերլուծական կարողություններն ընդգծվում են, երբ մա, համադրելով տարբեր պատմիչների հաղորդած փաստերը, ճշտում է, թե Օձնեցու կաթողիկոսության թվերը ո՞ր պմիրապետների իշխանության տարիներին է համընկնում: Ըստ Օրմանյանի՝ 717-720 թթ. ամիրապետ է եղել Էոմեր (Օմար) Բ-ն, 720-724 թթ.՝ Եզիդ Բ-ն, 724 թվից հետո, 19 տարի անընդմեջ՝ Հեշամը (Այդ թվականները տարբեր պատմիչներ ճիշտ թվից հետո): Ժամանակակից պատմաբանները ընդունում են գլխավորապես Օրմանյանի չեն գրում): Ժամանակակից պատմաբանները ընդունում են գլխավորապես Օրմանյանի տվյալները: Փաստորեն, Օձնեցու հայրապետության տարիները համընկնում են երեք ամիրապետների իշխանության տարիներին: Այդ ժամանակամիջոցում Հայաստանում եղել են երկու արաբ ոստիկան՝ Աբդուլազիզը և Վալիդը:

Համադրելով փաստերը, Օրմանյանը գտնում է, որ Ստեփանոս Տարոնեցու կողմից ճշված ամիրապետի մատվայրը Բաղդադը համարելը սխալ է: Ժիշտը մա համարում է Դամասկոսը, որն ընդունված է մաև այսօրվա գիտական գրականությունում: Համադրելով կիրակոս Գանձակեցու, Ասողիկի և Սամվել Անեցու ասածները, որոնցից վերջին երկուսը չեն մշտն ամիրապետի անունը, իսկ Գանձակեցին գրում է Հեշամի մասին, Օրմանյանը այդ փաստը սխալ է համարում, ճշիտը, մրա կարծիքով, Էոմերն է (Օմարը), որը ամիրապետ էր 720 թ. առաջ և, ըստ Օրմանյանի, մա էր կանչել և ընդունել Օձնեցուն:

Միջանկյալ ցանկանում ենք հիշեցնել, որ Հովհաննէս Կաթողիկոսը բնությունից առատ պարզ էր ստացել: Նա ուներ արտակարգ շքեղ արտաքին՝ «յոյժ գեղեցիկ տեսեամբ» (Ասողիկի խոսքերն են) և «ծաղկեալ ալեօք մօրուս, որ իջանէր միմչև զգրպանս զգետուու մորա»: Պատմիչները մշտն են, թե ինչպես է մա հոգ տարել իր գեղեցիկ արտաքինը առավել տպավորիչ դարձնելու համար, «ի պատուական երանգէ միւթից զգետատուրեալ պճնազարդել, և ոսկի մանր խարտոցի աղացեալ և իւղովք անուշիւք յայն ընդ խառնեալ, փչել ընդ ծաղկեալ մորուսն»:

Այդ բոլորի հետ մեկտեղ սակայն Օձնեցին վարում էր «խստամբեր կեանք» և օրինակ էր դառնում բոլորի համար իր «պահօք և աղօթիւք»: Ժողովուրդն այնպես էր գնահատում իր Հայրապետին, որ մրա անվան շուրջը ավանդապատումներ էին հյուսվում դեռևս կենդանության օրոք: Այդ ամենը պատճառ է դառնում ամիրապետի հրավերին և շքեղ ընդունելությանը, որի ընթացքում վերջինս զարմացած հարցնում է իմաստասերին, թե ինչպե՞ս Բրիստոսի հետևորդները այդպես «շքեղ կը զարդարուին»: Կաթողիկոսն այդ բոլորը բացատրելով «իշխանութիւնը ազդեցիկ ընել տալու» նպատակով ամիրապետին ցույց է տալիս իր հանդերձների տակ, անմիջապես մարմինի վրա կրած «այծեայ ցփսիները» և «դժոխմըբերելի քրձերը»:

Զարմացած ու զարհուրած ամիրապետը Հովհաննէս Օձնեցի Կաթողիկոսին արժա-

² Օրմանյան Մ., Ազգապատում, Ա հատոր, էջ 953:

նացնում է արևելյան շքեղ ընդունելության: Ե՛վ պատմիչները, և՛ Օրմանյանը բարձր են գնահատում Հայոց Հայրապետի հրաժարումը անձնական նպատակ ունեցող խնդրանքներից: Կաթողիկոսի ամենամեծ խնդրանքն էր՝ Հայոց Եկեղեցին ազատել հալածանքներից, հայ հոգևորականների՝ հարկերից, հայոց դավանանքին տալ ազատություն: Հրաժարումն անձնական շնորհներից բարձրացնում է կաթողիկոսին ամիրապետի աչքում, և նա ազատում է նաև Խրամի և Նախիջևանի եկեղեցիներում այրված հայ նախարարների գերի ազգականներին՝ վերականգնելով նրանց նախարարական իրավունքները:

Օրմանյանը բարձր է գնահատում Իմաստասեր Կաթողիկոսի դիվանագիտական և քաղաքական կարողությունները, նրա մոր մարտավարությունը՝ «վերջնապես և կատարելապես խզել Յունաց հետ հարաբերությունները, և ամբողջապես կապուիլ արաբական տիրապետության հետ»³: Այդ հարաբերությունները վերաբերում են և՛ կրոնական, և՛ քաղաքական ասպարեզին: Քաղաքական տեսանկյունով Օձնեցուն օգնեց ամիրապետը, և ուստիկանի ձեռքով Հայաստանից հեռացվեցին հույն վերականգններն ու զինվորները: Կրոնական տեսակետից Հայոց Հայրապետը «խստի հետապնդեց, ջնջել և վերցնել քաղկեդոնիկ դաւանութեան և յունական ծէսին համակերպութիւնները»⁴, որոնք տեղ էին գտել Եզր Կաթողիկոսի զիջումների պատճառով:

Քննադատելով «Սակս ժողովոց» գրվածքը, Օրմանյանն ապացուցում է, որ Եզրից մինչև Եղիա ընկած վեց կաթողիկոսները, որոնք դիտվում են որպես քաղկեդոնականություն ընդունած կաթողիկոսներ, չեն եղել քաղկեդոնիկ, և Հայոց Եկեղեցին նրանց ժամանակ ոչ թե շեղվել էր իր հնավանդ դավանությունից, այլ ունեցել «յունաց հետ համակերպություն տկարութիւնը»⁵: Դրանք «տկարութիւններ ու շեղումներ» էին, որոնք թխում էին քաղաքական թելադրանքից և նկատվում էին ոչ թե ողջ Հայաստանում, այլ «յունաց տիրապետած» գավառներում: Օձնեցին հասավ նրան, որ մուսիսկ այդ գավառներում գերակա դարձավ Հայոց Հայրապետի իշխանությունը:

Կաթողիկոսի ձեռնարկած գործերից Օրմանյանը բարձր է գնահատում Հայ Եկեղեցու հնավանդ ծեսերն ու սովորություններն ամրապնդելու, սարդած գեղծումները վերացնելու համար հրավիրված ժողովը: Հետագոտելով Օձնեցու ժամանակի և հետագա շրջանի պատմիչների աշխատությունները, Օրմանյանը փաստում է, որ նրանցից ոչ մեկը չի մշում ժողովի գումարման վայրը, թվականը և մասնակիցներին: Համադրելով փաստերը, նա հանգում է այն եզրակացության, որ ժողովը գումարվել է Օձնեցու՝ Դամասկոսից վերադառնալուց հետո, այսինքն՝ 720 թ., իսկ ժողովի գումարման վայրը, առանց տատանվելու, համարում է Դվինը, որովհետև այնտեղ էր Կաթողիկոսական Աթոռը, և այնտեղ էին գումարվում ազգային եկեղեցական ժողովները: Մեր ժամանակի պատմաբանները համամիտ են այս հարցում ևս:

Օրմանյանը բարձր է գնահատում Օձնեցու՝ ժողովի բացման կապակցությամբ ունեցած ելույթը՝ «այն գեղեցիկ ճառը, ... զոր խօսած է Իմաստասեր Կաթողիկոսը, ժամանակին պեղծերը բացատրելու և կարևոր խնդիրները ժողովականաց մտադրութեան յանձն-

³ Նույն տեղում, էջ 960-961:

⁴ Նույն տեղում, էջ 961:

⁵ Նույն տեղում:

նարարելու համար»⁶։ Նշելով, որ մախընթաց ժողովներում մտան առեմաքանություններ չեն եղել, Օրմանյանը դրանով ընդգծում է Օձնեցու արժանիքները, իմաստասիրական, աստվածաբանական և ծիսական «կետերու խորին հմտությունը», բայց ափսոսանք է հայտնում, որ այդ առեմաքանությունից սերունդներին չի հասել չորս գլուխ՝ Ժ-ից ԺԵ, դա համարելով հետագա պատմիչների կամ գրիչների մեղքը։

Մանրամասն վերլուծելով Դվինի ժողովում ընդունած և Կանոնագրքի մեջ մտած 32 կանոնները, մա մեկ առ մեկ բացատրում է ծիսական ողջ համակարգը, ապա շեշտում Մծղնեական և Պավլիկյան աղանդների դեմ պայքարելու միջոցները և անհրաժեշտությունը։ Կանոնների վերլուծությունից ամենահետաքրքիրը Օրմանյանի եզրակացությունն է. «Օձնեցիին կանոնները մեզի կ'իմացնեն, թե ինչ տեսակ գեղծումներ կը յաճախէին այդ միջոցին Հայ Եկեղեցւոյ մէջ, և պետք է հետևցնել, թե հակառակ ժամանակին շփոթ կացութեան, բացարձակապես ծանր կետեր չեն յիշուածները»⁷։

Գնահատելով Օձնեցու ձիրքերը, Օրմանյանը նկատում է, որ Հայոց Կաթողիկոսը «գաւտելով և գտելով Հայ Եկեղեցւոյ կանոնագիրքը կազմեց»։ Օձնեցու ժամանակից ի վեր այն ծառայում էր իբրև Հայ Եկեղեցւոյ օրինագիրք, որի ամենամեծ արժանիքը Օրմանյանը համարում էր այն, որ «Հայ Կանոնագիրքը Արևմտեանը կը կանխէ, և աւելի առաջ է, քան Իսիդորոս Մերկատորի գործը, որ Թ (9-րդ) դարում կազմուած է և ոչ թէ Է (7-րդ) դարու հեղինակ Իսիդորոս Հիսպադիոյ եպիսկոպոսին գործն է, որով մեր Օձնեցին Իսիդորիսէն դար մը առաջ յորինած կ'ըլլա Հայոց Կանոնագիրքը»⁸։

Հոգևորականներին և իրավունքի պատմության մասնագետներին թողնելով Հայոց Կանոնագրքի հոդվածների վերլուծությունը, անդրադառնալով «Գիրք թղթոց»-ին տված Օրմանյանի գնահատականին, ուր վերջինս անպացուցում է, որ այդ աշխատությունը, անտարակույս, պատկանում է Օձնեցուն. «Եւ ո՞վ աւելի յարմար կրնար ըլլալ հայրապետանոցի մէջ հնաւանդ դաւանութեանց վաւերագիրներու արձանագրութիւնը բանալու, եթէ ոչ մա ինքն, որ աւանդական բարեկարգութեան վաւերագիրները արձանագրելու գաղափարը լրացաւ և գործադրութեան ձեռնարկեց»⁹։

Մերժելով մինչ այդ եղած կարծիքները, որոնք «Գիրք թղթոց»-ի հեղինակ են համարել Մովսէս Ցուրտալցուն, Օրմանյանն ապացուցում է, որ այդ եպիսկոպոսը հայրապետանոցի մեջ պաշտոնական արձանագրություն գրելու իրավունք չուներ, բացի այդ, «Գիրք թղթոց»-ում տեղ գտած օրենքների մեծ մասը նրանից հետո է ընդունվել։

Հայ Եկեղեցւոյ դավանության մախանձահույզ պաշտպան Օրմանյանը բարձր է գնահատում Օձնեցու այն ճառերը, որտեղ հերքվում են Պավլիկյանների և երևութականների մոլորությունները և բացահայտվում իմաստասեր Հայրապետի հմտությունները ոչ միայն Աստվածաշնչի, այլև Եկեղեցւոյ հայրերի և տարբեր փիլիսոփաների երկերի իմացության մեջ։ Քննելով Օձնեցու մեզ հասած ճառերը, Օրմանյանը հաճախ նշում է, որ տվյալ ճառը չնայած պարունակած նյութով հնարավոր է, որ Օձնեցուն լինի, սակայն գրության

⁶ Նույն տեղում, էջ 965։

⁷ Նույն տեղում, էջ 967։

⁸ Նույն տեղում, էջ 968-969։

⁹ Նույն տեղում, էջ 971։

ոնք չի կրում Իմաստասերի վեհությունը, ուստի և նրա հեղինակությունը չէ:

Օձնեցու գործունեության կարևոր դրվագներից է հայ և ասորական հարաբերությունների մասին նոր գարկ տալը և այդ մատուցվող հրավիրած Մանագլերտի ժողովը, որը հատուկ քննության է ենթարկել Օրմանյանը: Պարզություն մտցնելով ժողովի վայրը Մանագլերտը ընտրելու հարցում (դա արաբ ուստիական Վալիդի պահանջն էր), ընդգծելով, որ ժողովի հրավիրման գլխավոր մատակարար եղել է կրոնական անապականության խնդրի շուրջ ծագած ծայրահեղ մոտեցումները և երևութականությունը հերքելը, Օրմանյանը ճիշտ է համարում նաև Սամվել Անեցու կարծիքը, որ այդ ժողովը հրավիրվել էր «վասն Քաղկեդոնի»: Այդ ժողովում մի անգամ ևս հաստատվեց հայերի և ասորիների միաբանությունը՝ անկախ այն ծիսական կետերից, որոնց մեջ երկու եկեղեցիները տարակարծիք մնացին:

Մանագլերտի ժողովը Օրմանյանը համարում է Օձնեցու գործունեության վերջին դրվագը, որից հետո նա առանձնացավ իր ծննդավայրում և Սոթից լեռան մոտ իր կողմից կառուցված եկեղեցում նվիրվեց աղոթական կյանքի՝ «խաչաչարչար ճգնութեան»: 728 թ. ապրիլի 17-ը (ըստ Հայսմավուրքի) համարվում է նրա մահվան օրը, իսկ Արդվի գյուղը՝ նրա ամփոփման վայրը: Օրմանյանը այսպես է գրում Օձնեցու մասին. «Օձնեցին կաթողիկոսական Գառազանագիրքին լուսաւոր պարծանքներէն մեկն է իր ուսումնական զարգացմամբ, եկեղեցական մախանձաւորութեամբ և վարչական կարողութեամբ, որով նոր կեանքի մոփրագործումը կատարեց ազգին մէջ, խաղաղ կենցաղ մը պատրաստելով քաղաքականապէս և անխառն եկեղեցական կացութիւն մը եկեղեցականապէս»¹⁰:

Ինչպիսի՞ վերաբերմունք են դրսևորել Օձնեցու նկատմամբ հոռմեադավան հայերը: Օրմանյանն այդ հարցին տալիս է հետաքրքիր պատասխան. նրանք չեն համարձակվել գովեստով արտահայտվել հակաքաղկեդոնիկ Հայրապետի մասին, բայց և չեն ցանկացել վիրավորել այդպիսի մի պայծառ անձնավորության: Նրանց փոխարեն այդ գործն իր վրա է վերցրել Կղեմես վարդապետ Գալանոսը: Հայ և Հռոմեական եկեղեցիների միացման հարցերին նվիրված իր աշխատության մեջ նա Օձնեցուն փորձում է անարգել տարբեր արտահայտություններով, անգամ զարմանալով, որ նրան սուրբ են համարել:

Միևնույն ժամանակ միաբանության անդամները խորշելով հետևել Գալանոսին, Օձնեցուն բարձրացնելու համար նրան ներկայացրել են որպես քաղկեդոնիկ: Չամչյանն իր «Պատմություն Հայոց»-ի մեջ 102 էջ է նվիրել այդ տեսակետն ապացուցելու համար: Նա փոխել է Մանագլերտի ժողովի հրավիրման ժամանակը, ստեղծել ժողովը հրավիրող նոր անձ՝ Հովհաննես Մանագլերտի: Չամչյանի աշակերտները նրան փոխարինեցին Հովհաննես Տեկորեցիով, իսկ քննարկելով Օձնեցու ճառերը, նրան համարել են ուղղափառ և պաշտպանել Պրոպագանդայի գրաքննության հարձակումներից:

Այսօր էլ, երբ օրվա հրամայականն է պայքար մղել զանազան աղանդների դեմ, որոնց գործունեությունը միտված է ազգային միասնությունը քայքայելուն, Հովհաննես Օձնեցու գործունեությունը մի նոր խորհուրդ է ստանում, որովհետև պաշտպանելով Հայ եկեղեցու ինքնությունը, Իմաստասեր Հայրապետը պաշտպանել է և հայության ինքնությունը, ազգության ինքնությունը:

¹⁰ Նույն տեղում, էջ 983: